7-ՐԴ ՆԻՍՏ

15 օգոստոսի, հինգշաբթի, երեկոյան, 1918թ.

Նախ խոսք եղավ կանոնավոր արձանագրություններ պահելու մասին և միաձայնությամբ որոշվեց, որ արձանագրությունները կատարվեն անվանական, մանրամասն, նախագահության վավերացումով՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր պատգամավորի, որ իր ասածը ստուգի կամ ուղղումներ մտցնի:

Այնուհետև քննության առնվեցին օրակարգի հետևյալ երեք խնդիրները.

ա) Պետական հսկողության հարց,

բ) Մանդատների ստուգում,

գ) Պետական ծառայողներին նպաստ տալու խնդիր:

Սիր. Տիգրանյան - Հանձնախմբի կողմից զեկուցանում է պետական վերահսկողության մասին: Հարցը դրված է ֆինանսների նախարար Խ. Կարճիկյանի կողմից: Տիգրանյանը առաջարկում է՝ քանի որ Երևանում համապատասխան ձեռնհասություն ունեցող մեկը չկա, Թիֆլիսի Պետական կոնտրոլի պալատից հրավիրել մի մասնագետ:

Պատգամավորներից մեկը հակաճառեց այս առաջարկին և պնդեց, որ տեղական ուժերն էլ բավական են:

Խորհրդարանը միաձայնությամբ որոշեց, որ պետական հսկողությունը ենթակա լինի խորհրդին և կառավարությունից որևէ կախում չունենա: Ապա արտոնեց հանձնաժողովին, որ դրսից հրավիրի հատուկ մասնագետ՝ օրինագիծը մշակելու համար:

Սիր. Տեր-Մարտիրոսյան - Մանդատային հանձնաժողովի կողմից զեկուցանում է, որ բոլոր պատգամավորների լիազորությունները հաստատված են օրինավոր վավերաթղթերով՝ տրված կուսակցությունների համապատասխան մարմինների կողմից: Թուրք և ռուս պատգամավորները լիազորագիր ունեն Ազգային խորհուրդներից, իսկ եզդի պատգամավորը՝ եզդի ազգապետից:

Առանց վիճաբանության հաստատվում է խորհրդի կազմը:

Պետական ծառայողներին նպաստ տալու խնդիրը առաջ բերեց տաք վիճաբանություններ: Ճառախոսներից շատերը գտնում էին, որ անհնարին է վճռել այսպիսի մի խնդիր, առանց ձեռքի տակ ունենալու մանրամասն տվյալներ այն մասին, թե ու՞մ պետք է համարել պետական ծառայող, ի՞նչ թիվ են ներկայացնում նրանք և ի՞նչ չափի է հասնելու նպաստի գումարը: Վճռվեց օրինագիծը վերադարձնել կառավարության՝ մանրամասն վերամշակության համար:

«Զանգ», 21 օգոստոսի 1918թ.